Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի՝ Էրեբունի, Նոր-Արեշ 50 և Գ. Մահարու փողոցների հատվածի քաղաքային զբոսայգու հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման « ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/2»ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

20.07.2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մամուլյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Պողոսյան /գնահատող/, Լ. Հայրապետյան/գնահատող/, Հ. հարությունյան/բացող/, Ա. Մխիթարյան/բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. Տեղեկություններ « ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ն. Մամուլյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի հուլիսի 20-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. « ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ն. Մամուլյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Հազարաշեն» ՍՊԸ
2	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ
3	«Երևաննախագիծ» ՓԲԸ
4	«Խոյանք» ՍՊԸ
5	«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ

*«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը armeps համակարգում հնարավոր չի եղել բացել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ն. Մամուլյան)

3.1 Բաց մրցույթ ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի՝ Էրեբունի, Նոր-Արեշ 50 և Գ. Մահարու փողոցների հատվածի քաղաքային զբոսայգու հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ				
Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Հազարաշեն» ՍՊԸ	1 000 000	749 000		618 000
«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ		1 550 000		1 550 000
«Երևաննախագիծ» ՓԲԸ		3 833 333	766 667	4 600 000
«Խոյանք» ՍՊԸ		5 000 000		5 000 000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ն. Մամուլյան)

4.1 Մասնակիցներից «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի և «Խոյանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը չեն բավարարում հրավերի պահանջներին, մասնավորապես «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում, գնի առաջարկում կա անճշտություն (ԱԱՀ-ի տառերով և թվերով տարբերակի միջև առկա է անհամապատասխանություն), իսկ «Խոյանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է էլեկտրոնային ստորագրության արտատպված տարբերակը, հետևաբար մասնակիցների հայտերը ենթակա են մերժման:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Հազարաշեն» ՍՊԸ	Բավարար
«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ	Բավարար
«Երևաննախագիծ» ՓԲԸ	Անբավարար
«Խոյանք» ՍՊԸ	Անբավարար
«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ն. Մամուլյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Հազարաշեն» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Ն. Մամուլյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 21.07.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 21.07.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն. Մամուլյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 28.07.2017թ. ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ն. Մամուլյան

Անդամներ՝ ---------- Տ. Պողոսյան

---------- Լ. Հայրապետյան

---------- Հ. Հարությունյան

---------- Ա. Մխիթարյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան